Հաստատված է Բարձրաստիճան պաշտոնատար անձանց
էթիկայի հանձնաժողովի 2015թ. նոյեմբերի 13-ի նիստի N 14-Ա որոշմամբ

ԿԱՐԳ

ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԻ ԳՈՒՅՔԻ, ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ ԱՆՁԱՆՑ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԻ ՀԵՏ ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԳՈՒՅՔԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԵՐԻ ԼՐԱՑՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԵՎ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ

ԵՐԵՎԱՆ – 2015

1. Ընդհանուր դրույթներ

1. Սույն կարգը սահմանում է բարձրաստիճան պաշտոնատար անձի հարկային տարվա գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց հայտարարագրի (այսուհետ՝ տարեկան հայտարարագիր), պաշտոնեական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու օրվա դրությամբ գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց հայտարարագրի (այսուհետ՝ պաշտոնը ստանձնելու կամ դադարեցնելու հայտարարագիր), բարձրաստիճան պաշտոնատար անձի ամուսնու, նրա հետ համատեղ ապրող ծնողի, ինչպես նաև համատեղ ապրող չափահաս և չամուսնացած զավակի հարկային տարվա գույքի և եկամուտների հայտարարագրի (այսուհետ՝ փոխկապակցված անձի հայտարարագիր), (այսուհետ միասին՝ հայտարարատու) լրացման նկատմամբ ներկայացվող պահանջները և ներկայացման կարգը:

2. Հայտարարագիրը լրացվում է՝ համաձայն ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 15-ի N 1819-Ն որոշման (2012թ. փետրվարի 23-ի թիվ 205-Ն և 2015 թվականի փետրվարի 19-ի N 150-Ն որոշումներով կատարված փոփոխություններով և լրացումներով) թիվ 1, 2 և 3 հավելվածներով հաստատված ձևաթղթերի:

3. Հայտարարագիրը լրացվում է միայն առցանց էլեկտրոնային եղանակով՝ http://file-online.ethics.am կայքէջի միջոցով կամ Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով)՝ պաշտոնական www.ethics.am կայքէջից օգտվելու միջոցով՝ հայերեն լեզվով (բացառությամբ ուղեցույցով սահմանված դեպքերի): Հայտարարագրման էլեկտրոնային համակարգ (այսուհետ՝ էլեկտրոնային համակարգ) մուտքն ապահովվում է հանձնաժողովի կողմից պաշտոնական գրությամբ ուղարկված բարձրաստիճան պաշտոնատար անձի օգտվողի անվան և գաղտնաբառի միջոցով:

4. Հայտարարագրի պահանջվող տվյալները հայտարարատուն լրացնում է հայտարարագրի լրացման ուղեցույցի պահանջներին և էլեկտրոնային համակարգի հուշումներում շարադրված քայլերին համապատասխան:

2. Հայտարարագրի լրացմանը ներկայացվող պահանջները

2.1. Բարձրաստիճան պաշտոնատար անձի, բարձրաստիճան պաշտոնատար անձի ամուսնու, համատեղ ապրող ծնողի, ինչպես նաև համատեղ ապրող չափահաս և չամուսնացած զավակի տվյալները

5. Հայտարարագրի **«անձնական տվյալներ» սյունակի** վանդակները էլեկտրոնային համակարգը լրացնում է ինքաշխատ եղանակով, բացառությամբ **«հեռախոսահամարները», «էլեկտրոնային փոստի հասցեն»**, ինչպես նաև **«բնակության հասցեն»** (եթե հայտարարատուի բնակության հասցեն տարբեր է հաշվառման հասցեից) վանդակների տվյալների, որոնք հայտարարատուն լրացնում է ինքնուրույն:

2.2. Բարձրաստիճան պաշտոնատար անձի հետ փոխկապակցված անձինք

6. Հայտարարագրի սույն բաժնում բարձրաստիճան պաշտոնատար անձը լրացնում է իր հետ փոխկապակցված անձանց՝ ամուսնու, համատեղ ապրող ծնողի, համատեղ ապրող չափահաս և չամուսնացած զավակի պահանջվող տվյալները:

2.3. Բարձրաստիճան պաշտոնատար անձի հետ փոխկապակցված պաշտոն զբաղեցնող անձինք

7. Բարձրաստիճան պաշտոնատար անձի հետ փոխկապակցված պաշտոն զբաղեցնող անձանց բաժինը լրացվում է՝ համաձայն «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի և 36-րդ հոդվածի 1-ին մասի:

Ընդ որում, նախարարի, նրա տեղակալ համար նախարարության համակարգում պաշտոն զբաղեցնող են հանդիսանում խորհրդականի, մամուլի քարտուղարի, օգնականի, ռեֆերենտի, նախարարության աշխատակազմի, տարածքային ստորաբաժանումների, նախարարության կառավարման ոլորտում գործող պետական մարմինների, նախարարության ենթակայությանը հանձնված

պետական ոչ առևտրային կազմակերպությունների, ինչպես նաև նախարարության կազմում գործող պետական հիմնարկների պաշտոնները:

8. Բարձրաստիճան պաշտոնատար անձի հետ փոխկապակցված և պաշտոն զբաղեցնող անձանց ցանկը չի ներառում համապատասխան մարմնում տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց պաշտոնները:

2.4. Բարձրաստիճան պաշտոնատար անձի առկա անշարժ գույքը՝ պաշտոնեական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու օրվա դրությամբ, բարձրաստիճան պաշտոնատար անձի և նրա հետ փոխկապակցված անձի հարկային տարում ձեռքբերած և օտարած անշարժ գույքը

9. Պաշտոնը ստանձնելու կամ դադարեցնելու հայտարարագրի **«2. բարձրաստիճան պաշտոնատար անձի առկա անշարժ գույքը՝ պաշտոնեական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու օրվա դրությամբ»** բաժնում հայտարատուն հայտարարագրում է պաշտոնեական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետություն տարածքում և նրա սահմաններից դուրս սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքի տեսակը, սեփականության տեսակը, ինչպես նաև՝ նշում գույքի հասցեն:

10. Տարեկան հայտարարագրի և փոխկապակցված անձի հայտարարագրի **«հարկային տարում ձեռքբերած և օտարած անշարժ գույքը»** բաժնում հայտարարագրվում են հայտարարատուին Հայաստանի Հանրապետությունում և նրա սահմաններից դուրս սեփականության իրավունքով պատկանող այն անշարժ գույքի վերաբերյալ տվյալները, որը ձեռք է բերվել կամ օտարվել հարկային տարում:

11. Բարձրաստիճան պաշտոնատար անձի հետ համատեղ ապրող ծնողը, համատեղ ապրող չափահաս և չամուսնացած զավակը հարկային տարում ձեռքբերված կամ օտարված անշարժ գույքը հայտարարագրում է, եթե հարկային տարում անշարժ գույքի ձեռքբերման գործարքների ընդհանուր գինը (արժեքը) կամ օտարման գործարքների ընդհանուր գինը (արժեքը) գերազանցել է 50 միլիոն դրամը: Ընդ որում, անշարժ գույքի ձեռքբերման գործարքների ընդհանուր գինը (արժեքը) կամ օտարման գործարքների ընդհանուր գինը (արժեքը) 50 միլիոն դրամը գերազանցելու դեպքում հայտարարագրման ենթակա են անշարժ գույքի ձեռքբերման և օտարման բոլոր գործարքները:

12. Հարկային տարվա ընթացքում անշարժ գույքի ձեռքբերման կամ օտարման որևէ գործարք կնքած լինելու դեպքում, հայտարարատուն էլեկտրոնային համակարգում տեղադրված անշարժ գույքի տեսակներից ընտրում է գույքի տեսակը, ինչպես նաև սեփականության տեսակը, ձեռքբերման կամ օտարման եղանակը, նշում առկայությունը հարկային տարվա սկզբին կամ ավարտին և ձեռքբերման կամ օտարման արժեքը: Ձեռքբերման կամ օտարման **«այլ»** եղանակի դեպքում անհրաժեշտ է մանրամասն նկարագրել ձեռքբերման կամ օտարման համապատասխան եղանակը:

13. Համատեղ կամ բաժնային սեփականությամբ հայտարարատուին պատկանող գույքի գործարքներն արտացոլելիս **«ձեռքբերման արժեքը»** կամ **«օտարման արժեքը»** վանդակում հայտարարատուն նշում է գույքի՝ իրեն պատկանող մասի արժեքը: Այն դեպքերում, երբ անշարժ գույքի նկատմամբ գրանցված է ամուսիններից մեկի սեփականության իրավունքը, սակայն օրենքի ուժով տվյալ գույքը համարվում է ամուսինների համատեղ սեփականությունը, ապա հայտարարատուներից յուրաքանչյուրը որպես անշարժ գույքի նկատմամբ սեփականության տեսակ ընտրում է «համատեղ սեփականություն»-ը և նշում անշարժ գույքի՝ իրեն պատկանող մասի արժեքը:

14. Անշարժ գույքի սեփականության իրավունքի պետական գրանցման առանձին վկայական ունեցող յուրաքանչյուր գույքային միավորի համար կատարվում է առանձին գրառում:

15. Հարկային տարվա ընթացքում նվիրատվության կամ ժառանգության եղանակով ձեռքբերված գույքի արժեքը (գինը) արտացոլվում է Հայաստանի Հանրապետության դրամով՝ հաշվարկված ներքոշարադրյալ մեթոդներով՝

ա/ կազմակերպություններից և անհատ ձեռնարկատերերից ստանալու դեպքում հայտարարագրում արժեքը (գինը) գումարը արտացոլվում է կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից այլ անձանց՝ դրանց իրացման միջին գներով, իսկ այդպիսի գների բացակայության դեպքում՝ կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ մոտ դրանց ինքնարժեքի (կամ ձեռքբերման արժեքի) և դրա նկատմամբ օրենքով սահմանված դեպքերում անուղղակի հարկերի հանրագումարով.

բ/ այլ աղբյուրներից ստանալու դեպքում՝ հայտարարագրում արժեքը (գինը) գումարը արտացոլվում է նույնանման գործարքների՝ տվյալ ամսվա հրապարակված վիճակագրական գներով, դրա անհնարինության դեպքում՝ նախորդող ամսվա հրապարակված վիճակագրական միջին գներով, իսկ դրանց բացակայության դեպքում՝ այդպիսի կամ նույնանման գործարքների համար՝ նախորդող 12 ամսվան վերաբերող հրապարակված վիճակագրական միջին գներով (սակագներով).

գ/ վիճակագրական միջին գնի բացակայության դեպքում գույքի գինը հայտարարագրում արտացոլվում է եկամտի ստացման կամ պահանջի իրավունքի առաջացման տարում այն ձեռք բերելու գնով, որը նման հանգամանքներում սովորաբար գանձվում է նույնանման ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների դիմաց: Այդ նպատակով կարող են կիրառվել առուվաճառքով զբաղվող սուբյեկտների (բրոքերների, մասնագիտացված խանութների, բորսաների, մասնագիտացված տոնավաճառների, շուկաների և այլն) գները (սակագները), գնացուցակային (կատալոգային) գները, այդ թվում՝ նաև համապատասխան դեպքերում համացանցի միջոցով ստացված տվյալները, ինչպես նաև նույնանման գույքի աճուրդային կարգով իրացման տվյալները:

16. Նախնական առուվաճառքի պայմանագրով անշարժ գույքի ձեռքբերման կամ օտարման պայմանագիր կնքելու դեպքում, ինչպես նաև հարկային տարվա ընթացքում հիպոթեքային վարկով անշարժ գույքի ձեռքբերման պայմանագիր կնքելու դեպքում, եթե հայտարարատուի սեփականության իրավունքը կամ դրա դադարումը չի գրանցվել տվյալ տարում, ապա գործարքի վերաբերյալ նշում է կատարվում ոչ թե սույն, այլ՝ **«հարկային տարում հանձնած կամ վերադարձված փոխառությունները»** բաժնում:

17. Հարկային տարվա ընթացքում տարաժամկետ վճարմամբ անշարժ գույք ձեռք բերելու կամ օտարելու դեպքում, եթե մինչև հարկային տարվա ավարտը տարաժամկետ վճարմամբ պայմանագրով սահմանված գումարը ամբողջությամբ չի վճարվել, ապա «**գործարքի գին**» վանդակում նշվում է պայմանագրով սահմանված անշարժ գույքի ամբողջ արժեքը: Միաժամանակ, տարաժամկետ վճարմամբ անշարժ գույք ձեռք բերելու դեպքում գործարքի գնի տվյալ հարկային տարվա ավարտին չվճարված մասը ձևակերպվում է **«եկամուտներ»** բաժնում՝ որպես ստացված փոխառություն (վարկ), իսկ տարաժամկետ վճարմամբ անշարժ գույք օտարելու դեպքում տվյալ հարկային տարվա ավարտին գործարքի գնի չստացած մասը ձևակերպվում է **«հարկային տարում հանձնած կամ վերադարձված փոխառությունները»** բաժնում՝ որպես տրված փոխառություն:

18. Հարկային տարվա ընթացքում նոր կառուցված անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման դեպքում նշումը կատարվում է որպես անշարժ գույքի ձեռքբերում: Ձեռքբերման արժեք պետք է համարել նախահաշվային փաստաթղթերում նշված արժեքը, իսկ նախահաշվային փաստաթղթերի բացակայության դեպքում՝ իրականացված շինարարության փաստացի արժեքը:

19. Սույն կարգի 16-18-րդ կետերով սահմանված դեպքերում, ինչպես նաև հայտարարատուին սեփականության իրավունքով պատկանող՝ սեփականության իրավունքի գրանցման առանձին վկայական ունեցող անշարժ գույքի միավորների

միավորման, բաժանման կամ առանձնացման, նպատակային կամ գործառնական նշանակության փոփոխման դեպքում հայտարարատուն այդ մասին մանրամասն նշում է հայտարարագրի **«նշումներ»** բաժնում:

20. Նվիրատվության եղանակով օտարված անշարժ գույքը հայտարարագրվում է 0 օտարման արժեքով:

2.5. Բարձրաստիճան պաշտոնատար անձի առկա շարժական գույքը՝ պաշտոնեական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու օրվա դրությամբ, Բարձրաստիճան պաշտոնատար անձի և նրա փոխկապակցված անձի հարկային տարում ձեռքբերած և օտարած շարժական գույքը

21. Պաշտոնը ստանձնելու կամ դադարեցնելու հայտարարագրի **«բարձրաստիճան պաշտոնատար անձի առկա շարժական գույքը՝ պաշտոնեական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու օրվա դրությամբ»** բաժնում հայտարարատուն հայտարարագրում է բարձրաստիճան պաշտոնատար անձին պաշտոնեական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության տարածքում և նրա սահմաններից դուրս սեփականության իրավունքով պատկանող շարժական գույքի տեսակը, սերիան, մակնիշը և դրա թողարկման տարեթիվը:

22. Տարեկան հայտարարագրի և փոխկապակցված անձի հայտարարագրի **«հարկային տարում ձեռքբերած և օտարած շարժական գույքը»** բաժնում հայտարարագրվում են հայտարարատուին սեփականության իրավունքով պատկանող՝ Հայաստանի Հանրապետության տարածքում և նրա սահմաններից դուրս հաշվառված այն շարժական գույքի վերաբերյալ տվյալները, որը ձեռք է բերվել կամ օտարվել տվյալ հարկային տարում:

23. Բարձրաստիճան պաշտոնատար անձի հետ համատեղ ապրող ծնողը, ինչպես նաև համատեղ ապրող չափահաս և չամուսնացած զավակը հարկային տարում ձեռքբերված կամ օտարված շարժական գույքը հայտարարագրում են, եթե հարկային տարում շարժական գույքի ձեռքբերման գործարքների ընդհանուր գինը (արժեքը) կամ օտարման գործարքների ընդհանուր գինը գերազանցել է 8 միլիոն դրամը: Ընդ որում, շարժական գույքի ձեռքբերման գործարքների ընդհանուր գինը (արժեքը) կամ օտարման գործարքների ընդհանուր գինը 8 միլիոն դրամը

գերազանցելու դեպքում հայտարարագրման ենթակա են շարժական գույքի ձեռքբերման կամ օտարման բոլոր գործարքները:

24. Եթե հարկային տարվա ընթացքում շարժական գույքի ձեռքբերման կամ օտարման որևէ գործարք է կնքվել, ապա հայտարարատուն հայտարարագրում է շարժական գույքի տեսակը, մակնիշը, սերիան, թողարկման տարին, ձեռքբերման կամ օտարման եղանակը և ձեռքբերման կամ օտարման արժույթը, շարժական գույքի առկայությունը հարկային տարվա սկզբին և վերջին, ինչպես նաև նշում ձեռքբերման կամ օտարման արժեքը: Ձեռքբերման կամ օտարման **«այլ»** եղանակի դեպքում անհրաժեշտ է մանրամասն նկարագրել ձեռքբերման կամ օտարման համապատասխան եղանակը:

25. Նվիրատվության եղանակով, ինչպես նաև վարկով, տարաժամկետ վճարմամբ կամ նախնական առուվաճառքի պայմանագրով շարժական գույքի ձեռքբերման կամ օտարման դեպքում, ինչպես նաև ժառանգության եղանակով շարժական գույքի ձեռքբերման դեպքում գործարքը գրանցվում է սույն կարգի 15-17-րդ և 19-րդ կետերին համապատասխան:

26.Նվիրատվության եղանակով օտարված շարժական գույքը հայտարարագրվում է 0 օտարման արժեքով:

2.6. Բարձրաստիճան պաշտոնատար անձի արժեթղթերը և այլ ներդրումները՝ պաշտոնեական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու օրվա դրությամբ, բարձրաստիճան պաշտոնատար անձի և նրա փոխկապակցված անձի հարկային տարում ձեռքբերած և օտարած արժեթղթերը և այլ ներդրումները

27. Պաշտոնը ստանձնելու կամ դադարեցնելու հայտարարագրի **«բարձրաստիճան պաշտոնատար անձի արժեթղթերը և այլ ներդրումները պաշտոնեական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու օրվա դրությամբ»** բաժնում, ինչպես նաև տարեկան և փոխկապակցված անձանց հայտարարագրի **«հարկային տարում ձեռքբերած և օտարած արժեթղթերը և այլ ներդրումները»** բաժնում հայտարարատուն հայտարարագրում է պաշտոնեական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության տարածքում և նրա սահմաններից դուրս սեփականության իրավունքով իրեն պատկանող կամ հարկային տարվա ընթացքում ձեռքբերված կամ օտարված արժեթղթի կամ այլ ներդրման տեսակը, նշվում համապատասխան արժեթուղթը թողարկողի անվանումը կամ ազգանունը,

անունը, հայրանունը, արժեթղթերի գումարային արժեքը, ինչպես նաև արժեթղթի ծածկագիրը (առկայության դեպքում): Օտարերկրյա արժեթղթերի դեպքում ավելացվում է նաև «օտարերկրյա» բառը:

28. Ձեռքբերման կամ օտարման **«այլ»** եղանակի դեպքում անհրաժեշտ է մանրամասն նկարագրել ձեռքբերման կամ օտարման համապատասխան եղանակը:

29. **«Արժեքը (գինը)»** սյունակի համապատասխան տողերում լրացվում է արժեթղթերի գումարային արժեքը՝ հաշվարկված ներքոշարադրյալ սկզբունքով.

- Բաժնային արժեթղթերի դեպքում, եթե տվյալ բաժնային արժեթուղթը թույլատրված է կարգավորվող շուկայում առևտրի համար (ցուցակված է բորսայում) և տվյալ բաժնային արժեթղթով գործարք է կնքվել նախորդող 6 ամսվա ընթացքում, ապա սույն սյունակում լրացվում է կարգավորվող շուկայի (բորսայի) կողմից հրապարակված տվյալ արժեթղթով վերջին գործարքի հիմքում ընկած միավոր արժեթղթի գինը՝ բազմապատկած արժեթղթերի քանակով: Հակառակ դեպքում, նշվում է բաժնային արժեթղթի անվանական արժեքը՝ բազմապատկած արժեթղթերի քանակով:
- Պարտքային արժեթղթերի դեպքում՝ նշվում է պարտքային արժեթղթերի մնացորդային գումարը:
- Վճարային արժեթղթերի դեպքում՝ նշվում է տվյալ վճարային արժեթղթի մնացորդային գումարը (առկայության դեպքում):

30. Բարձրաստիճան պաշտոնատար անձի հետ համատեղ ապրող ծնողը, ինչպես նաև համատեղ ապրող չափահաս և չամուսնացած զավակը հարկային տարում ձեռքբերված արժեթուղթը և (կամ) այլ ներդրումը հայտարարագրում են, եթե հարկային տարում արժեթղթերի ձեռքբերման և (կամ) այլ ներդրման գործարքների ընդհանուր գինը (արժեքը) կամ օտարման գործարքների ընդհանուր գինը (արժեքը) գերազանցել է 8 միլիոն դրամը: Ընդ որում, արժեթղթերի ձեռքբերման և (կամ) այլ ներդրման գործարքների ընդհանուր գինը (արժեքը) կամ օտարման գործարքների ընդհանուր գինը (արժեքը) 8 միլիոն դրամը գերազանցելու դեպքում հայտարարագրման ենթակա են արժեթղթերի ձեռքբերման և (կամ) այլ ներդրման և օտարման բոլոր գործարքները:

31. Նվիրատվության եղանակով, ինչպես նաև վարկով, տարաժամկետ վճարմամբ կամ նախնական առուվաճառքի պայմանագրով արժեթղթի կամ այլ ներդրման տեսակի ձեռքբերման կամ օտարման դեպքում, ինչպես նաև

ժառանգության եղանակով ձեռքբերման դեպքում գործարքը գրանցվում է սույն կարգի 15-17-րդ և 19-րդ կետերին համապատասխան:

32. Հարկային տարվա ընթացքում նվիրատվության եղանակով օտարված արժեթուղթը կամ այլ ներդրման տեսակը հայտարարագրվում է 0 օտարման արժեքով:

2.7. Բարձրաստիճան պաշտոնատար անձի հանձնած կամ բարձրաստիճան պաշտոնատար անձին վերադարձված փոխառությունները՝ պաշտոնեական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու օրվա դրությամբ, բարձրաստիճան պաշտոնատար անձի և նրա փոխկապակցված անձի հարկային տարում հանձնած կամ վերադարձված փոխառությունները

33. Պաշտոնը ստանձնելու կամ դադարեցնելու հայտարարագրի **«բարձրաստիճան պաշտոնատար անձի հանձնած կամ բարձրաստիճան պաշտոնատար անձին վերադարձված փոխառությունները պաշտոնեական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու օրվա դրությամբ»** բաժնում հայտարարատուն հայտարարագրում է փոխառու իրավաբանական անձի դեպքում անվանումը և գտնվելու վայրը, ֆիզիկական անձի դեպքում՝ անունը, ազգանունը և բնակության վայրը, իսկ **«արժույթը»** սյունակի համապատասխան տողում նշվում է արժույթի գումարը (չափը):

34. Հարկային տարվա կամ փոխկապակցված անձի հայտարարագրում, ի լրումն սույն կարգի 33-րդ կետով պահանջվող տվյալների, հայտարարատուն լրացնում է նաև փոխառության գումարի չափը հարկային տարվա սկզբում և վերջում, հարկային տարվա ընթացքում հանձնված և վերադարձված փոխառության չափը:

35. Բարձրաստիճան պաշտոնատար անձի հետ համատեղ ապրող ծնողը, ինչպես նաև համատեղ ապրող չափահաս և չամուսնացած զավակը հարկային տարում հանձնած կամ վերադարձված փոխառությունը հայտարարագրում է, եթե հարկային տարում փոխառության հանձնման գործարքների ընդհանուր գումարը (չափը) կամ վերադարձման գործարքների ընդհանուր գումարը (չափը) գերազանցել է 8 միլիոն դրամը: Ընդ որում, փոխառության հանձնման գործարքների ընդհանուր գումարը (չափը) կամ վերադարձման գործարքների ընդհանուր գումարը (չափը) 8 միլիոն դրամը գերազանցելու դեպքում հայտարարագրման ենթակա են փոխառության հանձնման և վերադարձման բոլոր գործարքները:

36. Որպես փոխառություն են դիտարկվում և սույն բաժնում են նշվում նաև բանկում ներդրված ավանդը, նախնական առուվաճառքի պայմանագրով, ինչպես նաև հիփոթեքային վարկի (եթե գործարքի արդյունքում հայտարարատուի սեփականության իրավունքը չի գրանցվել) միջոցով գույքի ձեռքբերման համար տվյալ հարկային տարվա ընթացքում գնորդին տրված նախավճարի (կանխավճարի) գումարը: Ընդ որում, հաջորդ տարիներին առուվաճառքի հիմնական պայմանագիրը կնքելու դեպքում (սեփականության իրավունքի գրանցման դեպքում) **«հարկային տարում հանձնած կամ վերադարձված փոխառությունները»** բաժնում անհրաժեշտ է նշում կատարել փոխառության վերադարձի մասին՝ **«հարկային տարում վերադարձված արժեքը»** վանդակում:

2.8. Բարձրաստիճան պաշտոնատար անձի պաշտոնեական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու օրվա դրությամբ առկա՝ նախորդ բաժիններում չներառված և ութ միլիոն դրամը գերազանցող կամ դրան համարժեք արտարժույթից ավելի արժեք ունեցող թանկարժեք գույքը, բարձրաստիճան պաշտոնատար անձի և նրա փոխկապակցված անձի հարկային տարում ձեռքբերած կամ օտարված թանկարժեք գույքը

37. Պաշտոնը ստանձնելու կամ դադարեցնելու հայտարարագրի **«բարձրաստիճան պաշտոնատար անձի պաշտոնեական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու օրվա դրությամբ առկա՝ նախորդ բաժիններում չներառված և ութ միլիոն դրամը գերազանցող կամ դրան համարժեք արտարժույթից ավելի արժեք ունեցող թանկարժեք գույքը»** բաժնում հայտարարատուն նշում է բարձրաստիճան պաշտոնատար անձին Հայաստանի Հանրապետության տարածքում և նրա սահմաններից դուրս սեփականության իրավունքով պատկանող, հայտարարագրի նախորդ կետերում չնշված 8 միլիոն դրամից կամ դրան համարժեք արտարժույթից ավելի արժեք ունեցող ցանկացած գույքի անվանումը և համառոտ հատկանիշները՝ թանկարժեք գույքի հիմնական բնութագրիչները:

38. Տարեկան կամ փոխկապակցված անձի հայտարարագրի **«հարկային տարում ձեռքբերված և սույն հայտարարագրի նախորդ բաժիններում չներառված և ութ միլիոն դրամը գերազանցող կամ դրան համարժեք արտարժույթից ավելի արժեք ունեցող թանկարժեք գույքը»** և **«հարկային տարում օտարված սույն հայտարարագրի նախորդ բաժիններում չներառված և**

ութ միլիոն դրամը գերազանցող կամ դրան համարժեք արտարժույթից ավելի արժեք ունեցող թանկարժեք գույքը» բաժիններում հայտարարատուն, ի լրումն սույն կարգի 37-րդ կետով սահմանված պահանջների, նշում է նաև թանկարժեք գույքի առկայությունը հարկային տարվա սկզբում կամ վերջում, ձեռքբերման կամ օտարման տվյալ գործարքի եղանակը, ձեռքբերման կամ օտարման արժեքը և արժույթը:

39. Ձեռքբերման կամ օտարման **«այլ»** եղանակի դեպքում անհրաժեշտ է մանրամասն նկարագրել ձեռքբերման կամ օտարման համապատասխան եղանակը:

40.Նվիրատվության եղանակով, ինչպես նաև վարկով, տարաժամկետ վճարմամբ կամ նախնական առուվաճառքի պայմանագրով արժեթղթի կամ այլ ներդրման տեսակի ձեռքբերման կամ օտարման դեպքում, ինչպես նաև ժառանգության եղանակով ձեռքբերման դեպքում գործարքը գրանցվում է սույն կարգի 15-17-րդ և 19-րդ կետերին համապատասխան:

41. Նվիրատվության եղանակով օտարած թանկարժեք գույքի գինը հայտարարագրվում է 0 արժեքով:

2.9. Դրամական միջոցները

42. Հայտարարագրի **«դրամական միջոցները»** բաժնում ներկայացվում են հայտարարատուի կանխիկ դրամական միջոցների, ինչպես նաև ընթացիկ բանկային հաշվին առկա դրամական միջոցների մասին տվյալները՝ արժույթը, իսկ տարեկան և բարձրաստիճան պաշտոնատար անձի ամուսնու հայտարարագրում նաև՝ դրամական միջոցների մեծությունը հարկային տարվա սկզբում և վերջում:

43. Սույն բաժնում չի ներառվում հայտարարատուի որպես բանկային ավանդ ներդրված գումարը:

2.10. Բարձրաստիճան պաշտոնատար անձի՝ պաշտոնեական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու տարվա հունվարի 1-ից մինչև պաշտոնեական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու օրը ստացված եկամուտները,

բարձրաստիճան պաշտոնատար անձի և նրա փոխկապակցված անձի հարկային տարում ստացած եկամուտները

44. Պաշտոնը ստանձնելու կամ դադարեցնելու հայտարարագրի **«բարձրաստիճան պաշտոնատար անձի՝ պաշտոնեական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու տարվա հունվարի 1-ից մինչև պաշտոնեական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու օրը ստացված եկամուտները»** բաժնում հայտարարագրվում են Հայաստանի Հանրապետության տարածքում և նրա սահմաններից դուրս հայտարարատուի պաշտոնեական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու տարվա հունվարի 1-ից մինչև պաշտոնեական պարտականությունները ստանձնելու կամ դադարեցնելու օրը ստացած, իսկ տարեկան և փոխկապակցված անձանց հայտարարագրերի դեպքում՝ տվյալ հարկային տարվա հունվարի մեկից մինչև դեկտեմբերի երեսունմեկը ներառյալ ստացած «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով սահմանված եկամուտների տեսակների և դրանց ստացման աղբյուրների վերաբերյալ տվյալները:

45. Սույն բաժնում հայտարարատուն լրացնում է ստացված եկամտի տեսակը, ինչպես նաև եկամուտ վճարողի անվանումը կամ ազգանուն, անուն, հայրանունը, վճարողի բնակության կամ գտնվելու վայրի հասցեն, եկամտի արժույթը, եկամտի չափը բնամթերքով:

46. Եկամտի ստացման **«այլ»** եղանակի դեպքում անհրաժեշտ է մանրամասն նկարագրել եկամտի ստացման համապատասխան եղանակը:

47. Որպես եկամտի չափ նշվում է եկամուտ վճարողի կողմից հայտարարատուին վճարված եկամտի առձեռն կամ նրա հաշվին փոխանցված գումարի մեծությունը: Օրենքով սահմանված դեպքերում հարկերը կամ պարտադիր վճարները եկամուտ վճարողի կողմից պահված լինելու դեպքում, նշվող գումարի չափը չի ներառում պահված հարկերը և պարտադիր վճարները: Այն դեպքում, երբ եկամուտ վճարողը հարկերի կամ պարտադիր վճարների պահում չի կատարել, նշվում է ստացած ամբողջ գումարը:

48. Դրամական արտահայտությամբ ստացված եկամուտների գրանցման դեպքում՝ **«եկամտի չափը բնամթերքով»** վանդակում հայտարարագրվում է 0:

49. Վարկային գծով, այդ թվում նաև՝ բանկային քարտերի միջոցով ստացված փոխառությունները, ինչպես նաև հիփոթեքային վարկերը (վարկերը), տարաժամկետ վճարմամբ գույքի ձեռքբերման գործարքների դեպքում՝ վաճառողին

դեկտեմբերի 31-ի դրությամբ չվճարված գումարը, գրանցվում են «եկամուտներ» բաժնում՝ որպես ստացված փոխառություն (վարկ):

50. Պաշտոնը ստանձնելու կամ դադարեցնելու հայտարարագրի դեպքում՝ վարկային գծով, այդ թվում նաև՝ բանկային քարտերի միջոցով ստացված փոխառությունները նշվում են պաշտոնը ստանձնելու կամ դադարեցնելու օրվա դրությամբ վարկային գծի օգտագործված մասի չափով, իսկ տարեկան կամ փոխկապակցված անձի հայտարարագրերի դեպքում՝ հարկային տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ վարկային գծի օգտագործված մասի չափով:

51. **«Եկամտի չափը բնամթերքով»** վանդակում լրացվում է նվիրատվության, ժառանգության կարգով կամ վիճակախաղերի, իրային շահումների (մրցանակների), գյուղմթերքի և այլ եղանակով ստացված բնաիրային կամ բնամթերային (ոչ դրամական ձևով) եկամտի ստացման դեպքում՝ հարկային տարվա բնամթերային կամ բնաիրային եկամուտը ՀՀ դրամով: Բնամթերային կամ բնաիրային եկամուտները գնահատվում են սույն կարգի 15-րդ կետում սահմանված կարգով:

52. Բնամթերքով ստացված եկամուտների գրանցման դեպքում «Եկամտի չափը (գումարը)» լրացվում է 0:

53. **«Վճարողի հասցե»** սյունակի վանդակներում լրացվում է հայտարարատուին եկամուտ վճարողի հասցեն՝ իրավաբանական անձի դեպքում գտնվելու, իսկ ֆիզիկական անձի դեպքում՝ բնակության վայրի:

2.11. Նշումներ

54. Հայտարարագրի **«Նշումներ»** բաժինը նախատեսված է հայտարարագրի որևէ տվյալի կամ գործարքի հետ կապված՝ հայտարարատուին պարզաբանում ներկայացնելու հնարավորություն ընձեռելու նպատակով:

55. **«Նշումներ»** վանդակում կարող են կատարվել գրառումներ, որոնք հայտարարագրի տպելու տարբերակում տեսանելի չեն, ենթակա չեն հրապարակման ու չեն ցուցադրվում կայքէջի այցելուների համար: Սույն նշումները հանդիսանում են հանգամանքների պարզաբանման գործիք և դրանց մասին տեղեկանում է միայն հանձնաժողովը:

56. **«Հանձնման ամսաթիվը»** ինքնաշխատ եղանակով լրացվում է համակարգում՝ հայտարարագրի հանձնման ամսաթվին համապատասխան:

3. ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ (ՀԱՆՁՆՄԱՆ) ԿԱՐԳԸ

57. Տարեկան հայտարարագիրը և փոխկապակցված անձի հայտարարագիրը (տվյալ հարկային տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ) էլեկտրոնային համակարգի միջոցով հանձնաժողովին պետք է հանձնվի յուրաքանչյուր տարի՝ ոչ ուշ, քան տվյալ հարկային տարվան հաջորդող տարվա փետրվարի 15-ը:

58. Պաշտոնը ստանձնելու կամ դադարեցնելու հայտարարագիրը էլեկտրոնային համակարգի միջոցով հանձնաժողովին պետք է հանձնվի պաշտոնը ստանձնելու կամ դադարեցնելու օրվան հաջորդող 15 օրվա ընթացքում:

59. Հայտարարագիրը սույն կարգին և էլեկտրոնային համակարգի ուղեցույցի պահանջներին համապատասխան լրացնելու դեպքում համակարգը հնարավորություն է ընձեռում հայտարարագիրը հանձնել **«հանձնել առանց էլեկտրոնային ստորագրության»** կամ **«հանձնել էլեկտրոնային ստորագրությամբ»** եղանակներից մեկի ընտրության միջոցով:

60. Հայտարարագիրը **«հանձնել առանց էլեկտրոնային ստորագրության»** եղանակով հանձնելու դեպքում, հայտարարատուն հանձնված հայտարարագրի՝ էլեկտրոնային համակարգի միջոցով գեներացված թղթային տարբերակը փոստային առաքման միջոցով ուղարկում է ք. Երևան, 0077, Բաղրամյան պողոտա 26, Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով հասցեով:

61. Հայտարարագիրը **«հանձնել էլեկտրոնային ստորագրությամբ»** եղանակով հանձնելու դեպքում թղթային տարբերակի գեներացումը և առաքումը հանձնաժողով չի պահանջվում:

62. Եթե հանձնված հայտարարագրում հայտարարատուն հայտնաբերում է վրիպակ, ապա նա կարող է ստեղծել **«ուղղում-հայտարարագիր»**՝ ուղեցույցով սահմանված կարգով, և հայտարարագրում կատարել փոփոխություններ՝ հայտարարագրի լրացման ընդհանուր կանոններով: Ուղղված հայտարարագիրը հանձնվում է ընդհանուր ընթացակարգով:

63. Տարեկան հայտարարագրում և փոխկապակցված անձի հայտարարագրում ուղղում կատարելու ռեժիմը գործում է մինչև տվյալ հարկային տարվան հաջորդող տարվա մարտի 1-ը, իսկ պաշտոնը ստանձնելու կամ դադարեցնելու հայտարարագրում ուղղում կատարելու ռեժիմը՝ պաշտոնը ստանձնելու կամ դադարեցնելու օրվան հաջորդող 30 օրվա ընթացքում: Նշված ժամկետներից հետո հայտարարագրում ուղղումները կատարվում են միայն հանձնաժողովի թույլտվությամբ՝ գրավոր դիմումների հիման վրա՝ համապատասխան հիմնավորումների առկայության դեպքում:

64. Առանց էլեկտրոնային ստորագրության հանձնված հայտարարագիրը նույնականացվում է դրա թղթային տարբերակը ստանալուց հետո:

65. Այն դեպքում, երբ հանձնաժողովը հայտարարագրում հայտնաբերում է ուղեցույցով սահմանված լրացման պահանջներին անհամապատասխանություն, հայտարարատուին տեղեկացնում է ճշգրտում կատարելու անհրաժեշտության մասին, ինչի արդյունքում նույնականացվում է հայտարարատուի հանձնած «ուղղում» նշումով հայտարարագիրը:

66. Հայտարարագիրը սույն կարգով սահմանված պահանջներին համապատասխան լրացված չլինելու դեպքում հանձնաժողովը այն չի նույնականացնում և հայտարարագիրը համարվում է չհանձնված: